




Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




Քիչ 9



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ





ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԻՍ ՀԱՆՐԱԿԻԴԱԳ HANRAKIDAG
ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعه علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Է. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 9 || 6 ՄԱՐՏ 1904

ՅԻՍՈՒՍԻՆ՝ ՏՂԱՔ



ը քսե՞ք, զղաք, ձեզ կը կանչէ Տէր.
— Պզտի զղաքներն բողե՛ք ինձի զան —
Դացե՛ք, օ՛ն, զացե՛ք անոր առընթեր՝
Իր սուրբ օրհնութիւնն առե՛ք փրկչական:

Յիսուսին, զղաք, զացե՛ք դուք ժայտուն,
Ձեզ կուտայ երկնից կեանքն երանական.
« Անոնցն է, կ'ըսէ, լոյս արժայութիւն,
Անոնց որ անբիծ սիրտն ունին մանկան »:

Յիսուսին, զղաք, ձեզ կը կանչէ Տէր,
Ձի դուք անմեղ ե՛ք, գերդ ձիւն՝ անառաւ.
Հեղութեան մէյմէկ խորան ձեր սրտեր՝
Անբրծին օծուան ունիք յորդառաւ:

Յիսուսին զացե՛ք, անոր քելին տակ,
Սրբութեան պիտի քաղցրութիւնն զգաք.
Զըւարթ՝ հոգիով, սիրով՝ հրեւտակ,
Պիտի միտ փայլիք իբրեւ արեգակ:

Ձեր դէմք ողորուն՝ հոն լոյս շողերով,
Պիտի խայտազին սեւեռիք անոր,
Ու ձեր խայտառեմն՝ համակ սէր, գորով՝
Աւխարհ ողորուի կեանքով նորանոր:

Յիսուսին գացե՛ք, ջրղա՛ք Յիսուսին,
Ան՛՝ ձե՛ր բարեկամն ու պաշտպանն արքուն
Ուժ կուսայ սանձե՛ղ կի՛րքն ունայն ու սին
Որոնց գե՛րին է հե՛ք սիրք մարդուն:

Կը լրսե՞՛ք, ի՛նչ կը կանչէ Տե՛ր .

— Թողե՛ք պզտիկներն ինձի մօտիկ գան —
Արտուացե՛ք, ջրղա՛ք, անոր առընթե՛ր,
Ի՛ր օրհնութիւններն առե՛ք փրկչական :

Տարէնտէ

ՄԿՐՏԻՁ Ա. ԹՈՒՐԵԱՆ

Ս Ո Ր Ր Բ Յ Ո Վ Լ Ա Ն Ն Ե Ս

ԽՈՍՐՈՎ ՔԷՇԻՇԵԱՆԻՆ

Սրբավայրին մարգագետիններով չըջապատուիլը չէ՛ որ մաս մը գրաւեց սիրտէս . ո՛չ ալ այն հինաւուրց խռոչացած ծառը, ուրուն անտերեւ ճիւղերուն վրայ ճերմակ լաթի տոթոյն կտորներ կապուած կը դողդղան, կամ գոյնզգոյն քուրջերու կտորներ, որոնք հանգոյց մը եղած, երկու ծայրերը կախուած, կ'օրօրուին գեփիւռէն զովանալով այրած սիրտիս պէս . չէ՛ այդ ծերացած ծառը, գաւառի անկեղծիկ հաւատքին իր թարգմանի պաշտօնովը չէ որ յուզեց հոգիս, ո՛չ ալ այն պզտիկ կամարը, ուրիշ բոկոտն ու գլխաբաց ներս կը մտնէ յուսահատ սիրտ մը, դեղին վտիտ մոմ մը լուսելու համար, ու իր յոյսերուն, իր երազներուն իրականացումին համար քար մը կը փակցնէ, լուսուած մոմին մուխէն սեւցած քարերուն վրայ:

Հո՛ն այդ կամարէն ներս մտնողը ժպիտով մը կամ արցունքով մը դուրս կ'ելլէ, կը հրճուի սիրտը, երբ փակցուցած քարը մոմոտ տեղի մը հանդիպելով քարին կը փակի. կը տխրի հոգին՝ երբ քարը վար կ'իջնայ որովհետեւ երբ առաջինին յոյսերը վայրկեան մը իրականացած կը տեսնէ, միւս կողմէն վերջին յոյսն ալ կը քաղէ:

Ո՞վ չէ ունեցեր նախապաշարումի ժամեր, ո՞վ անյուսութեան վայրկեաններու մէջ քիչ կամ շատ հաւատք չէ ընծայէր անծեղին կռիւնչին, ու ո՞վ յոյսով մը չէ ապրեր, գոնէ վայրկեան մը, երբ արտեւանունքը խաղցեր է. ո՛հ, մի՛ մեղադրէք բարեկամներ .

սէրը լքուածը բնական ամէն արդիւնքի մէջ յոյս մը կ'որոնէ հաւատքով, անյոյսը ամէն բանի մէջ յոյս մը կը փնտռէ, սիրահարը ամենէն անտարբեր շեշտի մը կամ արհամարհական նայուածքի մէջ գաղափար մը կ'ստեղծէ, ու մահամերձը, իր սնարին վերեւ դողդաղացող վտիտ մոմը գինքը չըջապատող տխուր գէմքերը մոռնալով, չարագուշ բուին հատկտուք եղերգին մէջ անգամ ապրելու յոյս մը կ'ունենայ:

X

Լուռ է լեզուս ու աչքերս կը խօսին ամենէն պերճ շեշտերով, սիրտս կը դողայ բուժող ծառին չոր ճիւղերէն կախուող քուրջերուն պէս: Վճիտ առուէն մէկտեղ կը նետենք քարերնիս դէպ ի ցածկէկ կամարը Ս. Յովհաննէսին. սրտիս բաբախիւնները շատ արագ են ու զօրաւոր, և կ'զգամ որ մի եւ նոյն յոյգերովը կը յուզուի ներս սիրտն ալ...: Չենք խօսիր երբէք, երկվայրկեանէ մը վերջին բլուզումներուն մէջ եղող մոմի մը առջինէնք, երկուքս ալ լուռ, աչքերնիս իրարու յառած, ձեռքերնիս մէյմէկ քար ու մեքենաբար իրարու կը հպին մեր կրակ չըթուռնենքը, մեր շունչի տաք հոսանքին հետ թռող սիրտի խոր հաւաչները իրար կը գըրկեն, իրարու մէջ կը թաղուին եւ մենք հաւատք ու երկիւղածութիւն մեր քօրերը կը զարնենք մոմի մուխէն սեւցած պատին:

Երկուքինս ալ... կը փակի...:

X

Անուշ ժպիտ մը կը փայլի մեր աչքերուն մէջ, որոնք վայրկեան մը իրարու կը յառին, երբ սէրի սրսփուք մը կ'անցնի մեր սիրտերէն, փափկիկ ձեռքը ձեռքիս մէջ, երկուքս ալ տենդէ բռնուածի պէս կը դողանք, երկուքս ալ խոնարհած կ'անցնինք սև կամարին տակէն... սիրտերնուս բաբախիւններուն ու աչքերնուս յառումներուն կ'ունկնդրենք լռիկ մնչիկ:

Գորտանբարդերու տակէն գորտերու կռկռոցը կը հնչէ պարզ ու կոշտ ներդաշնակութիւնով, բարտիներու տատանող ճիւղերուն մէջէն սոխակներու մեղմաղձիկ շեշտերը կը լսուին, ջինջ առուին մեղմ կլկլակը կը թրթռայ ու մեր սիրտին խորէն մի եւ նոյն տունն թռող սա խօսքը իրար կը խառնուի, մէկ հատ ըլլալու համար կարծես. « Ուխտդ ուխտական՝ սիրականս... »

Աննա Բաբայան

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԱՂԶԱՆՅ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՃԱՆՃԸ ԲԱՑԱԽՈՎ ՉԵՆ ԲՈՆԵՐ

Սոյն տրամախօսութիւնն պիտի արտասանեն հետեւեալ աշակերտուհիներն :

Տիկին Սաթինիկ, 33 տարեկան. — Տիկին Նուարդ, իր քոյրը, 30 տարեկան. — Տիկին Պիտոս, իրենց ազգականը, 65 տարեկան. — Սիրվարդ, Տիկ. Սաթինիկի աղջիկը, 13 տարեկան. — Մաթիտ, 11 տար. Տիկին Սաթինիկի աղջիկը : — Օր. Հայկանոյշ, իրենց վարժուհին, 25 տարեկան : — Շուշան, Տիկին Նուարդի աղջիկը, 15 տարեկան. — Ալիս, Տիկ. Նուարդի աղջիկը 10 տարեկան. — Կիրակոս աղբար. ծերուկ ծառայ, 60 տարեկան :

ՕՐ. ՀԱՅԱՆՈՅՇ, ՄԱԹԻՏ ԵՆ ՍԻՐՎԱՐԴ

Օր. Հայկանոյշ. — Նայի՛նք սա ուղղագրութիւնդ, Սիրվարդ : (Սիրվարդ իր տետրակն անոր կը ներկայացնէ) : Շա՛տ լաւ, աղջիկս. աղէկ գրեր ես, մի միայն ամբողջ էջին մէջ երկո՛ւ սխալ կայ... :

Սիրվարդ. — Համմէ՞, երկու սխալ մի : Ես կը կարծէի թէ բնաւ չունիմ :

Օր. Հայ. — Երկո՛ւ հատ կայ : նայէ՛, Ռեֆեղջիւր՝ փոխանակ Ռեֆեղջիւրի, եւ Գետացի՝ փոխանակ Գետածիի :

Սիր. — Օ՛հ, օրի՛րդ, ասոնք սխալներ չեն, բնական պատմութեան անուններ են լոկ :

Օր. Հայ. — Եւ սակայն պէտք է ուղղես. ուրեմն սխալ են :

Սիր. — Ի՛նչ ձանձրացուցիչ է : Ես կը յուսայի որ պիտի կրընամ հարիւրնոցս շահիլ :

Օր. Հայ. — Թերեւս վա՛ղը ըլլայ, բայց ինչո՞ւ այդչափ կ'աճապարես :

Սիր. — Ա՛հ, որիչ դրամներու ալ պէտք ունիմ:

Մարիլս. — Հապա ինծի՛, ինծի՛ ալ շատ պէտք է:

Օր. Հայ. — (Փայտելով). Թանկագին բանե՞ր երթաք պիտի գնէք:

Սիր. — Թանկագին չեն դժբախտաբար, բայց շատ օգտակար են. աղքատ կնկան մը տղին համար պայուսակ մը:

Օր. Հայ. — (Զուարթութեամբ). Ուրեմն շարունակեցէ՛ք ձեր դասերն՝ եթէ կ'ուզէք բաւական դրամ ունենալ ձեր ընելիք գընումներուն համար: (Սիրվարդ եւ Մարիլս կը սկսին եռանդօրէն աշխատիլ. դուռը կը բացուի, Շուշան գլուխը ներս կը խոթէ ու գահավիժաբար ներս կը մտնէ):

Առջիները, ՇՈՒՇԱՆ

Շուշան. — Օրիորդ, ինծի կը թոյլատրէ՞ք ձեր սենեկին մէջ պահուածիլ, զարմուհիս Տիկ. Պիստոս ամէն տեղ զիս կը փնտռէ:

Օր. Հայ. — Բայց խեղճ տղա՛ս, պէտք չէ պահուածիս երբ Տիկ. Պիստոս քեզ կը փնտռէ. ընդհակառակը, պէտք է անոր առջեւ երթաս:

Շուշ. — Օ՛հ, ո՛չ, օրիորդ. անիկա զիս աշխատանոցի մը մէջ փակելու համար կը փնտռէ: Ալիս հոն է արդէն. ան բռնուեցաւ, իսկ ես ինքզինքս ազատեցի:

Սիր. — Ինչո՞ւ համար տիկին Պիստոս քեզ փակել կ'ուզէ Ալիսին հետ:

Շուշ. — Վասն զի ա՛ն ալ ինծի պէս չար է միշտ: Տիկ. Պիստոս կը պնդէ թէ գէշ պիտի ըլլանք եւ կ'ուզէ մեզ աշխատեցնել երկաթէ գօտիով մը ու կռնակնիս ալ մետաղէ տախտակներ դնելով, որոնք ահռելի տանջանքներ կուտան եւ որոնք կ'արգիլեն գլուխնիս ու բազուկնիս երերցնել: Ինք բարեբաւ վօսի կը կոչէ զայն:

Մար. — Խեղճ Ալիսը մինչեւ հիմա փակուած է:

Շուշ. — Այո՛, տիկ. Պիստոս անոր օձիքէն բռնեց, անցուց անուրն ու տախտակները, ու զայն գոցած է խուցին մէջ՝ պատժելու համար իրեն զիմադրելուն. զանիկա սենեակին մէջ դոցած ու անոր պողպատէ միջոցին, ես փախայ: Ասոր համար կ'աղաչեմ, սիրելի զարմուհիներս եւ իմ սիրելի օրիորդս, պահեցէ՛ք զիս:

Օր. Հայ. — Խեղճ պզտիկ, չե՛մ կրնար քեզի օգնել՝ անհրաժեշտապէս համար տիկին Պիստոսին, որուն յանձնած է մայրիկդ զձեզ՝ իր ձաւորդուլեան միջոցին:

Շուշ. — Ո՛հ, օրիորդ, ասոր համար կը խնդրեմ, Ապահովա-
բար պիտի գայ ան ու ես կորսուած պիտի ըլլամ:

Օր. Հայ. — Մտիկ ըրէ՛, աղջիկս, ես ինչ որ կրնամ՝ պիտի
ընեմ. իմ սենեակս պիտի առանձնանամ՝ ձեզի մինակնիդ թող-
լով: (Օր. Հայկանոյց կը մեկնի):

ՍԻՐՎԱՐԴ, ՄԱԹԻՆՏ ԵՒ ՇՈՒՇԱՆ

Սիրվարդ ու Մաթիլ Շուշանին եով կը վազեն եւ աղուոր քա-
բասոց մը կը փնտռեն: Տիկին Պիսոսի ձայնը կը լսուի):

Շուշան. — (Լալով). Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ազատե-
ցէ՛ք զիս. ի՞նչ պիտի ըլլամ: (Սիրվարդ ու Մաթիլ զայն կը հրեն
սեղանի մը քակ ու ծածկուած է մինչեւ գետինը իջնող ծածկոյթով մը,
իրենց այ աւսօրեօք աշխատանքի կը սկսին: Սիրվարդ գիրք մը կ'առ-
նէ՝ հակառակ կողմէն բռնելով, ու Մաթիլ մասիս մը՝ գրչի տեղ:
Հագիւ տեղաւորուած են, եւ անա՛ տիկին Պիսոսու ներս կը մտնէ):

ԱՆՉԻՆՆԵՐԸ ԵՒ ՏԻԿԻՆ ՊԻՍՏՈՍ

Տիկ. Պիս. — (Կասկածոս նայուածք մը նետելով ամեն կողմ).
Մինա՞կ էք, օրիորդներ, մէկը չկա՞յ ձեզի հետ:

Սիր. — Օր. Հայկանոյց իր սենեակը գացած է, տիկին:

Տիկ. Պիս. — Մինա՞կ էք ուրեմն:

Մաթ. — Այո՛, տիկին, մինա՞կ ենք:

Տիկ. Պիս. — (Տղոց մօտենալով). Կ'երեւայ թէ անոր բացա-
կայութեանը չէք աշխատիր կոր:

Սիր. — Ինչո՞ւ այդպէս կը խորհիք, տիկին:

Տիկ. Պիս. — Որովհետեւ դուն, Սիրվարդ, դուն գիրքը հա-
կառակ կողմէն բռնեիր ես: (Սիրվարդ կը կարմրի եւ գիրքը կը դառ-
նորէ): Եւ դո՛ւն, Մաթիլտ, մատիտ մը բռնեիր ես ձեռքդ շարու-
նակելու համար մեղանով սկսած էջդ: (Մաթիլ մասիսը կը ձգէ եւ
գրիչ մը կ'առնէ կարմրելով): Ի՛նչ ալ չփութած է դէմքերնիդ:
Ճշմարիտ յանցաւորի գոյն՝ երեսնուդ գոյնը: Ահա՛ ինչ է տղաքը
չփայնելը, Շփացածներուն կը թոյլատրեն կատարել իրենց ամ-
բողջ կամքերը:

Սիր. — (Թափով). Մայրիկս ու մեր սիրելի Օր. Հայկանոյցը
մենէ չեն գանգատիր, տիկին. այսպէս դուք մեր առջեւ կրնաք

չպարտաւել կրթութիւնը՝ զոր անոնք կուտան մեզի:

Տիկ. Պիս. — Կրթութիւնը՝ որ զձեզ քաղաքավար ու սխրալի՝
կ'ընէ չիտակը: Ա՛խ, եթէ ձեզի ես մեծցուցած ըլլայի, ե՛ս, ար-
դիւնքը ուրիշ պիտի ըլլար:

Սիր. — Այո՛, արդիւնքը ուրիշ բան պիտի ըլլար, որովհետեւ
դժբախտ պիտի ըլլայինք փոխանակ երջանկանալու:



Մար. — Եւ չարձու, ծո՛յլ չալ չա՞նչ պէս եղածք են Շուշանն ու
Ալիսը:

Շուշ. — (Սեղանին տակէն). Ատիկա ճիշդ չէ՛, ես չար չեմ
այն տեղ ուր բացակայ է տիկին Պիստոս:

Տիկ. Պիս. — Ի՞նչ կ'իմանամ: Երեւան ելաւ ձեր չփոթութեան

պատճառը: Դո՞ւրս ելիր թաքստացէդ, օրիորդ, եւ ինձի՛ հետեւէ: (Տիկ. Պիսոսի խօսած ասեցեր, Շուշան չորս ոսփի վրայ դուրս կ'ելլէ սեղանին օակէն, ու ամուր հակակայ կողմէն կը սահի կիսաբաց դուռէ մը, ուրկէ պարտեզ կ'երթուի: Տիկ. Պիսոս կը սպասէ քանի մը վայրկեան, ու, Շուշանին երեւնալը չեսննելով, ծածկոյթը վեր կը վերցնէ, մէկը չի տեսներ ու մեծ զարմանք կը յայտնէ):

Տիկ. Պիս. — Ի՞նչ է աս: Ի՞նչ մը առաջ հոս էր, վստահ եմ որ իրեն ձայնը սեղանին տակէն լսեցի: Սիրվա՛րդ, Մաթի՛լտ, ըսէ՛ք, ո՞ւր է ձեր զարմուհին: Խօսեցէ՛ք, կը հրամայեմ:

Սիր. — (Խնդալով). Ձե՛մ կրնար ձեզի բան մը ըսել, տիկին, բանի որ բա՛ն մը չեմ գիտեր:

Տնկ. Պիս. — Դուք գիտէք թէ ո՞ւր էր, ի՞նչ եղաւ:


Մաթ. — (Խնդալով), Ձեզ կ'ապահովցնեմ, տիկին, թէ մենք ձենէ աւելի բան մը չենք գիտեր: Փնտռեցէ՛ք, նայինք պիտի գտնէ՞ք:

Տիկ. Պ. — Դէ՛կ, աղէ՛կ, օրիորդներ, պիտի Զանամ գըտնել Շուշանը, եւ երբ գտնեմ, պիտի պատժեմ այս շատախօսը, ինչպէս որ արժանի է: (Տիկ. Պիսոս կը մեկնի բորբոքած):

Թարգմ. Վ. ԳԱՐԱԳԱՆԵԱՆ

ՏԻԿ. ՍԵՆԿԻՐ ԿՈՐՄՈՒՀԻ

(Շարունակելի)




ՃՇՄԱՐԻՏ ԲԱՐԵԿԱՄ

Երիտասարդին մէկուն հարցուց հայրը թէ՛ ուսկի՞ց կուգայ. և երբոր ան « Բարեկամներս տեսնելէն կուգամ », պատասխանեց. — Ուրեմն շատ բարեկամ՞ ունիս, կրկնեց հայրը զարմացմամբ: Դուն ինձմէ աւելի երջանիկ ես, որդեակ, որովհետեւ եօթանասուն տարեկան եղայ եւ հազիւ մէկ բարեկամ կըցայ գտնել: » Սոյն պատասխանով ուզեց հայրը որդւոյն հասկընել որ խալացի մարդը ճշմարիտ բարեկամ չհամարիր ամէն իր երեսին խնդացողն. ամէն իր հետը խօսողը, վասն զի գիտէ որ անոնք երեսին կը ծիծաղին, հետը կը խօսին, ետեւէն առջեւէն կը պտտին, իրենց չահուն համար:

Acétification

յեր. միւս կողմէ գայն լեցնելու համար գործածուած ելեքտրականութեան հազիւ կէսը կրնայ օգտակարապէս ետ տալ, մնացեալ կէս գորութիւնը կը կորսուի: Ենթադրենք թէ 100 ձիու զօրութիւն ունեցող ելեքտրական ջիմաւօ մը ունինք կուտակիչ մը լեցընելու համար. այդ ոյժէն մեքենան ինքնին 10 ձիու զօրութիւն պիտի ոչնչացնէ. 5 ձիու զօրութիւն ալ կուտակիչը մեքենային հետ հաղորդակցութեան դնող թելերուն ընդդիմահարութիւնը պիտի չեզոքացնէ, ուրեմն կուտակիչը պիտի ստանայ 85 ձիու զօրութիւն մը. արդ հաշուուած է որ ամէն կուտակիչի, ինչ դրութեամբ ալ ըլլայ, ընդունած զօրութեան 100ին 60ը միայն կրնայ օգտակար ըլլալ. ուրեմն մեր գործիքին ընդունած 85 ձիու զօրութեանը մէջ 51ը պիտի գործածուի. ինչպէս կը տեսնուի 100 ձիու զօրութիւն արտադրող մեքենայի մը ելեքտրականութիւնը՝ կուտակիչներու մէջէն անցնելով կէս առ կէս կ'ոչնչանայ: Սակայն այս կորուստը կրնայ անտեսուիլ երբ նկատի առնենք կուտակիչին ընծեւած դիւրութիւնները: Օրինակի համար, մեծ քաղաքներու մէջ բանող ելեքտրական թրամուէյները այս ուժովն է որ կը գործեն: Ճամբուն մէկ ծայրը գլխաւոր կայարանին մէջ հաստատուած ելեքտրական գործիչներու միջոցաւ կը լեցնեն զանոնք եւ կառքերուն նստարաններուն տակ կը զետեղեն. դրական եւ ժրխական բեւեռները կը կապեն ելեքտրական շարժիչ մեքենային որ կառքին տակը դրուած է եւ դառնալովը անիւներն ալ կը դարձնէ: Մի եւ նոյն դրութիւնը կը գործածուի օդօմօպիլներու մէջ, ինչպէս նաեւ ծովու վրայ պզտիկ նաւակներ քալեցնելու: Առանձնական տուներու մէջ կուտակիչները կը ծառայեն ելեքտրական լոյս արտադրելու: Մեծ գործարաններու մէջ ուր ոյժի աւելորդ մաս մը կ'արտադրուի՝ գայն կը փոխեն ելեքտրականութեան եւ կ'ամբարեն կուտակիչներու մէջ որոնք գիշերները գործատեղիները կը լուսաւորեն:

Acétification. Քացախացում. — Այս անուան տակ կ'որակեն ալքօլ պարունակող հեղուկներու (գինի, խնձորօղի եւայլն) քացախի փոխուիլը: Այս երեւոյթը ռքսիտացում մըն է. սովորական ալքօօլը կարգ մը ազդեցութիւններու տակ՝ զոր քիչ մը վարը պիտի ուսումնասիրենք, կը փոխուի քացախական թթուի:




Այս երեւոյթին պատճառները Բասթօր ուսումնասիրած ու բացատրած է: Բաց օդին ձգուած ալքօլական հեղուկներու մակերեսին վրայ կը բազմանայ Mycoderma aceti (քացախի ծաղիկ) կոչուած սունկը. ասիկա է որ յառաջ կը բերէ քացախացումը. օդէն կը ծծէ թթուածինը եւ կուտայ ալքօլին որ ինչպէս վերի տարազը կը բացատրէ՝ կը փոխուի քացախական թթուի եւ ջուրի: Եթէ այդ սունկերը հեղուկին մէջ ընկղմենք, այնպէս մը որ անոմ հետ իրանուելով արտաքին օդին հետ հաղորդակցութիւն բնաւ

Acétique

չունենայ, պիտի տեսնենք որ քացխացումը կանգ կ'առնէ: Բաս-
դէօս դիտած է որ կազմուելու վրայ եղող քացախին մէջ մանրա-
դիտական տեսակ մը կենդանիներ յառաջ կուգան որոնք աճելու
համար օդին թթուածինին պէտք ունին: Երբ սունկերը բազմա-
նալով կը ծածկեն հեղուկը պարունակող ամանին ամբողջ բերանը
եւ օդին ներս թափանցելը կ'արգիլեն, այս կենդանիները միա-
նալով վար կը քայեն զանոնք եւ դէպի յատակը կը տանին: Ա-
սոր համար է որ քացախացումը շատ դանդաղօրէն կը կատար-
ուի:

Acétique (acide), Քացախական թթու. — Երկու տեսակ
կ'ըլլայ, անջուր եւ ջրատեալ թթուները: Առջինը անգոյն հե-
ղուկ մըն է, հիւլէներուն ձգողական զորութիւնը խիստ քիչ է,
քացախի ամենակծու հոտ մը ունի. տեսակարար ծանրութիւնն է
1.073, կ'եռայ 1370ի մէջ, խոնաւ օդին ձգուելով կը ջրոտի, բայց
դիւրաւ ջուրի մէջ չլուծուիր: Բնալուծական տարազն է Բն² Ջ⁶.
— Ջրոտեալ քացախական թթուն (Բն² Ջ² թ²) 16 աստիճան
տաքութենէ վար հաստատունն է. անկէ վեր՝ անգոյն հեղուկ մը կը
դառնայ: Կծու հոտ մը եւ թթու համ ունի: Մարմինին դպչելով
այտուցներ կը պատճառէ: Տեսակարար ծանրութիւնն է 1,003:
123⁰ի մէջ կ'եռայ: Շուտով կը բորբոքի: Պարզ ալքօլի ոքսիտա-
ցումէն յառաջ կուգայ, եթէ ասոր շոգին հրաշէկ բորսւլէնէ խո-
ղովակի մը մէջէ անցնենք. կը տարբաղադրուի եւ յառաջ կը բե-
րէ ջուր, ածխական թթու, պէնզին, ասէթօն, նաֆթալին եւ
փենական թթու: Կիրի աղերուն վրայ (օրինակի համար բոլոր
կրաքարերը) ազդեցութիւն մը չընէր երբ ջուրի մէջ լուծուած չըլ-
լայ: — Քացախական թթուն ջուրի մէջ լուծուելով յառաջ կը
բերէ Քացախը: Քացախի պատրաստութեան զանազան կերպերուն



մէջ ամենէն գործնական ու դիւրագինը
հետեւեալն է: Երկու մէթը բարձրու-
թեամբ տակաւ մը կ'առնեն որու վերի
կողմը կրկին յատակ մը Ա. Ա. կայ, ծա-
կոտած եւ իւրաքանչիւր ծակը կէս մը
գոցուած բամբակի խցաններով: Տակա-
ւին ստորին մասին վրայ կարգաւ Դ ծա-
կերը կան եւ տակաւն ալ ամբողջ լեց-
ուած է հաճարի ծառի տաշուքներով:
Քացախանալիք հեղուկը կը բազկանայ
մէկ մաս ալքօլէ, հինգ մաս ջուրէ եւ
մէկ հազարորդ գարեջուրի լորձնէ. ա-
սիկա կը լեցնեն Գ ծակէն ուր Ա. Ա. յա-
տակին վրայ հաւաքուելով կամաց կամաց ծակերէն կը կաթկթի
փայտի տաշուքներուն վրայ ու կը քացխանայ. տակաւին վարի Դ
ծակերէն օդը ներս կը մտնէ եւ կը դիւրացնէ քացախացումը.
յետոյ կը մեկնի Բ բացուածքէն:

Քացախացներ. — Քացախական թթուն պարունակած ջրածնին

մէկ հիւլէին տեղ միայն՝ մետաղի մը հիւլէն կրնայ անցնիլ և յառաջ բերել քացախաւոր մը: Քացախական թթուին տարազը ըլլալով C_2H_2 թթւ, քացախատինը պիտի ըլլայ C_2H_4 թթւ, եթէ մետաղը միարժէք երբ կրկնարժէք ըլլայ՝ երկու մասնիկ թթուի հետ կը միանայ եւ տարազը կ'ըլլայ $(\text{C}_2\text{H}_2)_2$ թթւ, — Քացախատները ընդհանրապէս լուծելի են ջուրի մէջ. երբոր տաքնան քացախական թթուն կ'արձակեն, Ծծմբական թթուի ազդեցութեամբ կը տարբազադրուին: Չանոնք պատրաստելու համար ոքսիտներու կամ բնածխատներու վրայ ներգործել կոտան կեդրոնացած քացախական թթուն:

Acétylène. Ելեկտրակազ. — Կալիոնի պատրաստութիւններէն աւելցած սեւ միացորդներուն վրայ ջուրը հակազդել տալով յառաջ եկած նիւթերուն մէջէն ելեկտրակազը նշմարուած էր արդէն 1836ի ատենները Տալի բնալոյծին կողմէն. սակայն մինչեւ 1859 ընաւ չէր ուսումնասիրուած անշատ վիճակի մէջ: Բօբօ պատրաստեց զայն ալքոլի ու եթերի կազերու մէջ ելեկտրական կայծեր արձակելով: 1850էն 1862 Պէրթրլօ ուսումնասիրեց այս կազը եւ երեւան հանեց անոր յուսաւորիչ կարողութիւնը: Հաստատեց թէ գործարանաւոր մարմիններու տաքութեան ազդեցութեամբ տարբազադրուելով յառաջ եկած կազերուն մէջ կը գտնուի ան և կարելի է զայն պատրաստել ջրածինով լեցուած ելեքտրական հաւկիթի մը երկու ածուխներուն մէջ զօրաւոր կայծ մը արձակելով: Անկէ ի վեր շատ աշխատութիւններ կատարուած են ելեկտրակազը պատրաստելու համար. սակայն ո՛չ ոք յաջողած էր մեծաքանակ ու ածան արտադրելով ճարտարարուեստի մէջ մտցնել զայն: — Այսօր կը պատրաստեն զայն կիրի բնածխատը ջուրով տարբազադրելով: Ելեկտրական հնոցի մէջ կիրի եւ ածուխի խառնուրդի մը մէջէն զօրաւոր հոսանք մը կ'անցնեն եւ քիչ քիչ ջուր կը բերեն վրան: Տեղի ունեցած աարբազանքութիւնը հետեւեալ կերպով կը կատարուի:

C_2H_2 կ + H_2O = C_2H_4 + Կի
Կիրի քնածխատ ջուր Ելեկտրակազ Կիր
Յառաջ եկած կիրը շատ մեծ քանակութեամբ կ'ըլլայ եւ անպէտքան մը ըլլալով պարապ բեռ մը կ'ըլլայ: —

Ելեքտրակազին լուսաւորիչ կարողութիւնը օգային կազինէն քանի մը պատիկ աւելի է. կրնայ նոյն իրի մրցիլ ելեքտրական լոյսին հետ: Արտադրած լոյսը ճերմակ ըլլալով՝ տեսնուած առարկաներուն գոյնը չաւրուի, այս առաւելութեանը համար լուսանկարչութեան շատ կը յարմարի: Չայն գործածելու համար փորձած են ձեռքի լապտերներ շինել, սակայն այս կերպը յաջողութիւն չէ ունեցած: Մասնաւորաբար մեծ ապարաններու, ագարակներու եւայլնի մէջ կարելի է օգտակարացնել զայն մասնաւոր գործիքներ գետնդրելով, Այսօր կը փորձուի զայն հեղուկացնելով սովորական բէթրօլի պէս գործածել. բայց այս ալ պայթումի վտանգներ ունի: — Ելեկտրակազը C_2H_2 անգոյն դիւ-

Achanti — Achille

րաւ բռնկող կազ մըն է. լուսաւորիչ զօրաւոր բոցով մը կը վառի եւ անխորժ հոտ մը կ'արձակէ. թունաւոր է: Կը լուծուի տարբեր չափերով ջուրի, ալքոլի, քաղցրահամ թթուի, պէնդինի եւայլնի հէջ: Բայըթէ յաջողած է 83 միջնորոտ ճնշումով եւ 48 աստիճանի մէջ վերածել զայն անգոյն հեղուկի մը որ ջուրէն շատ թեթեւ է: Կազային վիճակին մէջ թթուածինի հետ միանալով կը պայթի:

Achanti, Ասանդիսներու երկիր. — Կը գտնուի Ափրիկէի արեւմտեան կողմ. (Ոսկիի եղերքին վրայ). Ասիմաններն են հարաւէն Բրա, արեւմուտքէն Թանոէ, հիւսիսէն և արեւելքէն Վոլթա, Տարածութիւնն է 160.000 քառ. երկրին հարաւային մասը լեռնոտ է, կը գտնուին կրանիթի կլիկացած գագաթներ որոնք մինչեւ 5—600 մէթր բարձրութեան կը հասնին. իսկ հիւսիսային կողմը տափարակ է: Հողը՝ լեռնոտ մասերուն մէջ աւազուտ եւ գրեթէ անբերրի է, տափաստաններու հողը սեւ ու շատ պարարտ կ'ըլլայ: Շատ մը գետեր կ'ուսգեն երկիրը՝ Բրա, Թանոէ, Վոլթա եւ հարկատուն Թայն: — Աշանդիները սեւ ցեղին գեղեցիկ մէկ ճիւղը կը կազմեն: Ծագումնին անծանօթ է. Ժէ. րդ դարու վերջերը հիւսիսային-արեւելքէն իջած են: Բնակիչները թիւով 3 միլիոնի մօտ, վայրագ բնակչութիւն մը ունին: Իրենց կրօնական արարողութիւններուն մէջ տակաւին մեծ տեղ ունի մարդագոհը: Հակառակ ասոր խելացի ցեղ մըն են. գիտեն օգուտ քաղել երկրին հանքային, երկրագործական եւ այլ հարստութիւններէն:

Achille, Ափիլէս. — (Դիցաբան.) — Դեդիսի եւ Բէլլէի որդին. Միրիաոններու թագաւորը: Հոմերոսի անմահացուցած հելլէն հերոսներէն ամենէն նշանաւորը: Ծնելուն պէս մայրը զայն Սդիքսի մէջ ընկզմեց անխոցելի ընելու համար, սակայն գաշապարը ուրկէ կը բռնէր չի թրջեցաւ: Դաստիարակներն եղան Ֆէնիքս եւ Բիրոն՝ որ աղեղ նետել, վէրքեր բուժել սորվեցուց իրեն և ոյժը զարգացնելու համար առիւծի ծուծով կերակրեց զայն: Գալգասի պատգամը յայտնած էր որ Ափիլէս՝ Տրոպագայի առջեւ պիտի մեռնի: Ուրիշ պատգամ մ'ալ ըսած էր թէ առանց անոր ներկայութեան Տրոպագայի չպիտի առնուի. ուստի Հելլէնացիները խորամանկ Ոգիսեսը զրկեցին անոր: Ափիլէս գրաւի մը մէջ յաղթութիւնով ստիպուեցաւ Տրոպագայի շուրջը կռուողներուն միանալ: Ակամէմոն զինքը նախատելով Ափիլէս վրէժ լուծելու վրայ էր, երբ Միճերվ արգելեց զայն: Այն ատեն քառուեցաւ իր վրանը երդում ընելով բնաւ չմասնակցիլ կռիւին: Իր տսպարէզէն մեկնելովը Հելլէնացիները սկսան պարտուիլ: Նոյն իսկ՝ իր ամենէն սիրելի բարեկամը Բադրուէլ՝ Ափիլէսի կողմէ սպաննուեցաւ: Այս լուրին վրայ Ափիլէս վազեց վրէժ լուծել. Հէքթորը սպաննեց եւ իր կառքին ետին կապելով երեք անգամ քաղաքին շրջանն ըրաւ: Ինչ ետքը, Պարիս կամ Պարիսի դիմակին տակ ծածկուած Ապոլոն սպաննեց գիւցազնը՝ մարմնոյն վիրաւորելի մասին նետ մը նետե-

ՊԵՃԵԼԻԿ ԱՂԲԱՏԸ

Զրմեան սասիկ քանին ու փոխ ,
Երբ կը սուրմար դուրսն ողնալով ,
Լար փողոցը մանչ մը փափուկ ,
Զայնով մ'համակ սեր ու գորով :


Հովին գոռումն , գոչումն ու ծգին
Կը խեղդեին այդ ողբն մեղմիկ ,
Որ ճըմէր իսկ քարէ հոգին
Երբ նա լալէն կանչէր « Մայրիկ » :

Վառարանին ֆովէն արագ
Ցատկեց Արամ՝ հղթայրս պրծիկ ,
Վագեց դեպի դուռը շիտակ
Յուզած էր ձայնն սրտանքիկ :

Շուտ մը դարձաւ աշխարհ քաղ
« Եղբայր , քսաւ արտասուելով ,
Որք մանկիկ մ'է գուրեհն ստանա՞ծ
Վեր քերէ՞մ զայն կրակին ֆով » :

— Գնա՛ , վեր քեր : Ըսի չըսի ,
Քաջելով խոր սիրեկոն հառաջ՝
Շուտ մը մըսցուց դուռէն ներսի ,
Պրզիկ մանկիկ մը ջրծգունած ,
Անոր նիհար դեմքը ջրծգոյն ,
Բոքիկ ոտքը , հասակն փափուկ
Զարկին սրտիս շանթի մ'հանգոյն ,
Ըսի , « Ինչո՞ւ կուրաս ձագուկ :
Սիրուն մանկիկ . դու չունի՞ս մայր ,
Ինչո՞ւ գուրեհն դուրս դրիկեց քեզ ,
Ես ֆու մայրիկ՝ քեզ քամ մի՛ շար
Եթէ դու զայն կորուստեր ես » :

— Չէ՛ , իմ մայրիկ տունն է հիմա
Մերկ ու մօթի լայ շարունակ ,
Որ մուրաշէ կ'ամչնայ ,
Բրդուն մ'հաց է , լոկ իմ փափաք » :



ԳԻՏԱԿԱՆ ՎԷՊ

ԴԷՊ Ի ԼՈՒՄԻՆԵ

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

Հօրեղբորորդիս այն դիբերէն էր, որոնք նորութիւններու եւ գիտերու երբէք կարեւորութիւն չեն տար: Իր տղայութեան ատեն՝ այն բոլոր բարքերն ու սովորութիւնները որոնք առաջին անգամ կը տեսնէր եւ կամ իրեններուն չէր նմանէր, ապուշ, ծիծաղելի կամ գէշ կ'երեւար իրեն: Մանաւանդ խափշիկները շատ կը զուարճացնէին զինքը, ինք այն կարծիքն ունէր որ, իրենց սեւութիւնը բնականէն չէր, եւ այսպէս ինքզինքը մեկանի թաթախելը խիստ ծիծաղելի կը գտնէր: Երբոր մեծցաւ, բնութիւնը չի փոխեց, կը խնդար եւ կը հեգնէր այն ամէն բաները զորս առաջին անգամ կը լսէր կամ կը տեսնէր:

Առտու մը Բարիզի Շան օր Մարսէն կ'անցնէր, ուր առաջին անգամը ըլլալով օդապարիկով բարձրանալու պատրաստութիւններ կ'ընէին: Մեծ ամբոխ մը այս տարօրինակ տեսարանը ըմբոջխնելու եկած էր: Բարիզի բոլոր պատերուն վրայ եւ բոլոր լրագիրներուն մէջ ազդարարուած էր որ, քսան եւ հինգ պարոններ նաւակով մը օդը պիտի ելլէին, եւ Հռոմի մէջ պիտի նախաճաշէին՝ Աթէնքի մէջ պիտի հաւիտէին եւ հակոտեայնելու մէջ պիտի ընթերէին: Առաջուրնէ հետեւեալ առտուան նախաճաշն ապսպրուած էր, Բարիզի Քաթէին առաւօտեան ճիշդ 10ին պատրաստ ընելու համար: Բայց օդապարիկը մտնելու ատենին՝ օդաչու խումբը յանկարծ անակնկալ անհանգստութեան մը մատնուեցաւ. մէկուն գլուխը կը ցաւէր, ուրիշ մը՝ հարբուխ կ'ունենար, միւսը ջղապրկութիւն եւ ուրիշ մը նոպայ կ'զգար: Վերջապէս քսան եւ հինգ տեսակ հիւանդութիւններ: Այս տեսակ հիւանդանոցով մը մեկնիլ ապուշութիւն էր: Ամբոխը անհամբեր կ'ուպասէր արգիւնքին: Հրեանքը խոստացաւ վարձքին կէսը՝ այս արշաւանքը առանձին կատարելու յանձն առնող արկածախնդրի մը: Մէկը չէր համարձակէր յառաջ նետուելու: Հօրեղբորորդիս, Լարութին, ճեղքեց ամբոխն, մօտեցաւ հնարչին ու ըսաւ. « Կ'ընդունի՞մ, տուր վարձքը »: Ես կը նստիմ նաւակդ, չեմ վախնար »: Որոշուած գումարը տրուեցաւ, զորս գրպանելէն վերջ, ամբոխին ծափահարութիւններուն մէջտեղ դէպի օդապարիկը յառաջացաւ: « Բա՛հ, կ'ըսէր

հօրեղբորորդիս, որչափ պարզամիտ էք որ կը կարծէք թէ հոս մտնելուն մէջ վտանգ մը կայ. ես շատ ապահով եմ որ, այս օդապարիկը իր տեղէն կապարի զանգուածի մը նման չի պիտի շարժի»։ Այս միջոցին չուանը կտրուեցաւ, եւ օդապարիկը քսանըհինգ մարդու տարողութիւնովը կայծակի պէս սրացաւ եւ մէկ ուտումով հինգ հարիւր ոտք բարձրացաւ, ժողովուրդին կեցցէներէն աւելի ոգեւորուած՝ կարծես։

Հօրեղբորորդիս վախէն սարսուռաց, վայրկեան մը։ Յետոյ մէկ ձեռքով նաւակին եզերքին կառչեցաւ եւ միւսով յուսահատական նշաններ րրաւ, բոլոր ուժովը պոռալով. « Կասեցուցէ՛ք, կեցուցէ՛ք, իջնալ կ'ուզեմ, ես խնդալու համար ըսի. ասկէ գէշ կատակ չըլլար, վերջը պիտի գըջաք, դուք իրաւունք չունիք բռնութեամբ գիս հոս դնել, կեցուցէ՛ք »։

Բայց փոխանակ օդապարիկը կենալու կ'ելլէր, կ'ելլէր թնդանօթի մը ռումբին արագութիւնով։ Հօրեղբորորդիս մէկ ակնարկով նախ ամբողջ Շան-տը-Մարսը տեսաւ, յետոյ բոլոր Բարիզը, յետոյ Սէնի բոլոր նահանգները, քիչ յետոյ մօտակայ ամբողջ նահանգները, ետքը ամբողջ Ֆրանսան, բոլոր Եւրոպան եւ վերջապէս երկրագնդին կէսը։ Հիանալի տեսարան մըն էր ասիկա։

Լարութին այնպիսի սահմաններէ կ'անցնէր ուր երբեմն կը սարսուէր ցրտէն, երբեմն այնչափ տաք էր որ կը նուաղէր, եւ երբեմն ալ բարեխառն միջոցներէ կ'անցնէր զոր կատարելապէս ախորժելի կը գտնէր։

Տեղեր ալ կային ուսկից Օ տը Բօլօներ կը հոտէին, ուրիշ տեղ մըն ալ պէրկամոթ. ուրիշ տեղերէ վարդ, մանուշակ եւ ուրիշ քաղցրահոտ բուրումներ։ Հօրեղբորորդիս, բան մը շատ տարօրինակ կը գտնէր. վարը, շատ խորը, ոտքերուն տակ, Երկրին հետհետէ պզտիկ տեսնելն էր, մինչդեռ ընդհակառակն ուրիշ մոլորակ մը, գլխուն վրայ կախուած, զգալիօրէն կը խոշորնար։ Մէկը գերթալով մթնշաղ կ'երեւէր իսկ միւսը կը լուսաւորուէր։

Այսպէս շատ մը ժամեր գլխու պտոյտ տոռոզ արագութեամբ մը բարձրանալէ ետքը, երբ օդապարիկը երկու գունտերուն մէջ տեղն հասաւ, մէկէն կանգ առաւ. այս դիրքին մէջ երկու հակառակ կողմերէն ալ հաւասարապէս քաշուելով, այլ եւս ոչ յառաջացաւ եւ ոչ ալ նահանջեց։ Հիմա ի՞նչ պէտք էր ընել։ Քանի մը վայրկեանի սպասումէ եւ անշարժութենէ յետոյ, Հօրեղբորորդիս վախցաւ եւ սկսաւ « Օգնութի՛ւն, օգնութի՛ւն », կանչել, ուստի կանուժի՛ւն, պոռաց, եւ այնչափ անհանդարտ շարժումներ րրաւ որ օդապարիկին ակամայ ցունց մը տուաւ։ Օդապարիկը գծով մը միայն իր դիրքէն խախտեցաւ, բայց ասիկա արդէն բաւական էր

որ վարի գունտին քաշողութեան հակադէր, եւ օդապարիկը վերի վայր շրջելով առաջնէն աւելի արագ սկսաւ երթալ: Շուտով դէպ ալ մոլորակը դիմեց որ զինք կը քաշէր. նաակը Լուսնի լեռան մը գլուխը կեցաւ հանդարտիկ մը: Հօրեղբորորդիս գլուխը վերցուց եւ կարմիր երկնքի մը մէջ խոշոր սկաւառակի մը նման աչքերով, բերանով եւ քիթով կանանչիկէ գունտ մը տեսաւ: Երկիրն էր ասիկա:

Այն լեռն որուն վրայ օդապարիկը կեցած էր, գրեթէ յղկուած մաքուր հիանալի աղամանդ մըն էր, որուն կողերէն մանիշակագոյն ծառերու մէջտեղէն ահեղագոռ հեղեղ մը կը հոսէր, որուն գոյնը, համը, հոտը մեր երկրին կաթին կը նմանէր:

Հեռուն դաշտագետնի մը վրայ՝ Լարութին գիւղախումբեր նշմարեց, որոնք կը փափլային իրեւ թէ անոնք մարգարիտներով շինուած և զմրուխտով ծածկուած ըլլային փոխանակ հերձաքարի: Հոն տեսաւ նաեւ նարնջենիներու անտառներ, որոնց ծառերուն իւրաքանչիւրը մերիններէն տասն անգամ բարձր էին և որոնց պտուղները խոշոր տակառներու կը նմանէին: Աղամանդէ լեռնագագաթին շուրջը գտնուած ծառերը շատ պզտիկ էին, որովհետեւ աղամանդը՝ վարի դաշտին հողը կազմող սուտակի եւ ոսկիին խառնուրդին չափ բեղմնաւորիչ չէ: Հոն ծաղիկներու երփներանգ հաւաքածոյ մը կար, ոմանք թուխ, ոմանք դեղին, ոմանք անթառամ ծաղիկներ եւ ուրիշներ հարսնուկներ էին: Կային նաեւ ամէն տեսակէ թռչուններ, պզտիկ արծիւներ, անգղներ և բազէներ որոնց բոլորն ալ բթամատէ խոշոր չէին եւ շատ յարմար էին ողջ ողջ կլլուելու: Այս աշխարհի թռչունները հօրեղբորորդիս տեսնելով ընտանեւոր եկան իր ուսին, գլխուն եւ ձեռքերուն վրայ թառելու եւ գանիկա ընտանեւոր կը կցցէին, միայն պզտիկ ագռաւ մը ծառին գագաթը կը կենար, եւ մեր սոխակներէն շատ աւելի ներդաշնակ կերպով կը դայլայլէր: Դժբաղդարար այս միջոցին վիթխարի դեղձանիկ մը որուն թեւերուն բացուածքը առնուագն 50 ոտք կար, մէկէն ի մէկ օդին մէջ երեւցաւ. զոր տեսնելով արծիւները, անգղներն եւ բազէները սարսափահար իրենք զիրենք տերեւներու տակ ծածկեցին, եւ պզտիկ ագռաւն ալ իր մելամաղձիկ ներդաշնակութիւններուն վերջ տուաւ:

Երկար ժամանակ Լարութին յափշտակուած այս տեսարանը դիտելէն, որոշեց գոհարալեռան գագաթը թողուլ: Վարը շատ մը առուակներու հանդիպեցաւ, որոնք լեռներու կողերէն ջրվէժի պէս կ'իյնային: Ասոնցմէ մէկէն՝ ճաշակեց, տեսաւ որ ընտիր սեր էր, ուրիշէ մը՝ որ լիմոնաջուր էր. երրորդէ մը՝ որ անիկա ալ նուշմպելի մ'էր: Շատ հեռուն քարահանք մը տեսաւ, որուն շորս

կողմը բիւրեղացած շաքարի անհուն կոյտերով ծածկուած էր: Նա-
րընջենիի պզտիկ անտառի մը մէջ նշմարեց նաև ճագարներու ե-
րամ մը, որոնք խոշոր բարակի մը հետքերը կը հալածէին,

Յետոյ, հորեղբորորդիս դիմացը մարգագետնի մը մէջ տեսնել
կարծեց գայլերու, վագրերու, առիժներու, յովազներու և ուրն-
գեղջիւրներու վահմակներ եւ մեծկակ ոչխար մը հովուին քովը
կկգած՝ որ այս եզակիան հօտին պահպանութիւնը կ'ընէր, և ժա-
մանակ առ ժամանակ հոս հոն կը վազուրուտէր, ուղիղ ճամբուն
բերելու համար քանի մը ճողոպրած վագրեր, աղէկ կըսմիթ տա-
լով ըմբոստին թաթերուն: Տեսաւ նաև քիչ մը հեռուն աղուէո-
ներու խումբ մը հաւէ առա՝ որդուած է

Թարգմ. ԱՍԱՏՈՒՐ ՃԱՆԿԵԱՆ

Աշակ. Իրաւնոսեան վարժ.

(Մնացեալն յաջորդով)

Բարոյական Խրատներ

ՀԱՆՐԱՅԱԿԻ ՓՈՔՐԻԿ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ

Ծ. — ձեւարիս գեղեցկութիւնը


Մարմնոյ գեղեցկութիւնը բնութեան մեզի տուած մէկ շնորհքն
է, հետեւապէս մենք ամէնքս ալ չենք կարող գեղեցիկ ըլլալ:
բայց ամէնքս ալ, եթէ ուզենք, հրապուրիչ կրնանք ըլլալ: Ես
չատ տղաքներ կը ճանչնամ որոնք, թէեւ դէմքի գեղեցկութիւն
ունին, բայց երբեք հաճելի չեն երեւար ուրիշներու: Անոնք խո-
ժոռ ու կախ դէմք մը ունին միշտ, առտուանց մինչեւ իրիկուն,
եղունգներ կը կրծելով, չարութիւն եւ գէշ բաներ կը խորհին: Ըն-
կերներու հետ տեսակցել, անոնց հետ խաղալ, զուարճանալ չեն
ուզեր, գատ, միայնակ ապրիլ եւ կամ մի քանի չար ընկերնե-
րու հետ կենակցել փափաքելով, որն ի բուն ստորին գաղա-
փարներով կը սնուցանեն իրենց միտքը: Եւ գիտէ՞ք այսպիսիներ
մարմնական առողջութենէ ալ կը զրկուին: Անշուշտ այսպիսի տը-
ղու մը ոչ ես՝ ոչ ալ ուրիշ մը կ'ուզէ համակրիլ:

Շատ հրապուրիչ եւ սրտագրաւ է այն տղան որ գեղեցիկ դէմ-
քէ մը աւելի, լաւ նկարագիր մը ունի, որուն դէմքը օճառի եւ

պարզ ջուրի առոյգ գործածութենէն կը փայլի, որուն մազը գեղեցկապէս հարթարուած է եւ որուն հանդերձները — թէեւ ոչ նոր ոչ ալ նորաձեւ — տակաւին ամբողջ եւ մաքուր են: Ահա տղայ մը որ վստահութիւն կը ներշնչէ ամէնուն:

Տղաքներ, մաքուր սովորութիւններ ունեցէ՛ք. եթէ կ'ուզէք որ ճամարտապէս գեղեցիկ ըլլաք:

Դէմքիդ գեղեցկութեանը շատ քիչեր կը հաւնին: Բայց նկա-



Ազնիւ նկարագիր ունեցող տղան, ժամը 12ին պէս շիտակ կը կենայ:



Նկարագիրը աւրուած տղան ժամը 6ը 5 անցած կը քալէ իր ծաղիկ հասակին մէջ:




Բազրիդ գեղեցկութեան ամէն ոք կը հաւանի, մինչեւ իսկ քութինամիդ՝ որ այնքան կ'ատէ զքեզ:

×

Դեղեցիկ մուճակները գեղեցիկ ոտքեր չեն կրնար չինել:
— Եղջերուին մորթը աւելի յարգի է քան եղջիւրները:
— Եթէ դէմքի գեղեցկութիւնը արծաթ է՝ նկարագրի գեղեցկութիւնը աղամանդ է:

— Ի՞նչ է քու կեանքդ. — կարեւոր հատուցում մը: Մշտաշարժ ջաղա՞ցք մ'է: Ո՛չ, ոստայնանկի գործարան մ'է որ կը հիւսէ ինչ որ ես եւ ինչ որ կ'ընես:

ՄՐՏԱՀԱՆԳԻՍ



ԿԱՐԵԻՈՐ ԶԵԿՈՅՑ ՄԸ

Հանրագիտակ երկու տարի է ի վեր կանոնաւորաբար հրատարակուելով, կարծենք թէ, բաւական վստահութիւն ներշնչեց իր յարատեւութեան մասին, սակայն զարմանալի է տեսնել որ երբ մենք առանց վերապահութեան վստահութիւն կ'ընենք առաջին անգամ ներկայացնող բաժանորդներուն և քիչ ետք բաժնեգինք գանձելու իրաւունքը ընդունելով թերթ կը շրկենք, տարեշրջանը աւարտելէն տակաւին երկու ամիս ետքն ալ չենք ստանար կարգացուած թերթերու դրամը: Հիմա որ ընթերցող հասարակութեան ճանչցուցինք մեր ձեռնարկին լրջութիւնն ու յարատեւութիւնը, որոշած ենք ապառիկի դրութիւնը վերցնել, ուստի կը խնդրենք որ առանձին նամակով մը անձնապէս թերթ ուղղուները բաժնեգինք միասին շրկեն, նոյնպէս մինչեւ հիմակ ուղղակի մեզ բաժանորդագրուողները դրամը մեզ հասցնեն առանց յապաղումի: Իսկ հոն ուր գործակալ ունինք, արդէն անոնք սկսած են բաժնեգինները գանձել եւ չենք յուսար որ ո եւ է մերժումի հանդիպին քանի որ որոշ պայմանաժամէ մը ետքը ապառիկ թերթերը դադրեցնելու մտադրութիւն ունինք:

Տպագրիչ եւ Հրատարակիչ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ

ՊՈԼԻՍ, ՊԱՊԸ ԱԼԻ ՃԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 38. ԻԳՏԱՄ ԼՐԱԳՐԻ ԴԷՄ

Քաւառները գլխաւոր քաղաքներու մէջ ընդհանուր ներկայացուցիչներ ունի տպարանս, որոնց կրնան դիմել տպագրական ամէն տեսակ գործեր ունեցող, եւ կամ ո' եւ է գրքի մը պէտք ունեցողները, եւ փոխարժէքն անոր վճարելով, կ'ընդունին ապսպրանքները: Այս միջոցով իրենք կ'ազատին թէ՛ աւելորդ ծախսերէ եւ թէ՛ նամակի եւ այլ կորուստներէ. եւ ինչ որ ամէնէն կարեւորն է, փոքր գումարներու փոխադրութեան համար յառաջ եկած դժուարութիւններէն ու հոգերէն կ'ազատին:

Քաւառներու մէջ Հանրագիտակի Մեծ. Գործակալներու դիմողները կրնան սա առաւելութիւնն ալ վայելել որ, թէ՛ իրենց յանձնարարութիւնները կէտ առ կէտ կը կատարուին ամենակարճ ժամանակի մէջ եւ թէ միշտ վստահելի անձնաւորութիւն մը կ'ունենանք իրենց մօտ պատասխանատու ամէն առթիւ:

ԽՐԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՈՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

The first of these is the fact that the
the second is the fact that the
the third is the fact that the

the fourth is the fact that the
the fifth is the fact that the
the sixth is the fact that the

THE SEVENTH

the eighth is the fact that the
the ninth is the fact that the
the tenth is the fact that the
the eleventh is the fact that the
the twelfth is the fact that the
the thirteenth is the fact that the
the fourteenth is the fact that the
the fifteenth is the fact that the
the sixteenth is the fact that the
the seventeenth is the fact that the
the eighteenth is the fact that the
the nineteenth is the fact that the
the twentieth is the fact that the
the twenty-first is the fact that the
the twenty-second is the fact that the
the twenty-third is the fact that the
the twenty-fourth is the fact that the
the twenty-fifth is the fact that the
the twenty-sixth is the fact that the
the twenty-seventh is the fact that the
the twenty-eighth is the fact that the
the twenty-ninth is the fact that the
the thirtieth is the fact that the

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20 էջէ բաղկացեալ :

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր :

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար	30 ղրուշ
Գաւառաց »	35 »
Արտասահման	45 »
Հատը	30 փարայ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղպաղեան
Գօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրկէրեան
Եւթոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրպա՛ն, Միսաք էֆ. Ս. Մելգոնեան
Թալաս, Կարապետ էֆ. Գօճաեան
Թեֆիթեաղ, Ասատուր էֆ. Արսէնեան
Թրիպոլի Դրիգոր էֆ. Հ. Գարագաշեան
Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիւսսուն Թովմաս էֆ. Գարագաշեան
Կիւրիւն, Դրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Հալեպ, Կ. էֆ. Պօտիկեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Արժ. Տ. Դրիգոր Բահ. Թաշճեան
Մարսե, Արժ. Տ. Նէրսէս Բհ. Շահինեան
Մարզուան Արամ էֆ. Գարակէօյեան
Միացեալ-Նանակներ, Մ. Մ. Գարակաժուրեան և Ընկ.
Նիկովիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Նիսսար, Յովհաննէս էֆ. Փանոսեան
Շապին Գարա հիսար. — Դագիկ էֆ. Օղանեան
Պայպուրդ, Մասիկոն էֆ. Վարժապետեան
Սամսուն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սրվազ, Միհրան էֆ. Իսպիրեան
Տիւրպէֆր, Լևոն էֆ. Սրապեան
Տիւրպէֆր, Միհրան էֆ. Պաթաճեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան